ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի մարտի 5-ի, ժամը 14:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ** (հեղինակային կոլեկտիվ՝ Ս.Հ.Պարսյան, Ա.Ս.Սիմոնյան, Զ.Ա.Թումասյանի, Էլ.Ն.Մաթևոսյան, Զ.Ս.Մելքումյան, Տ.Բ.Իգիթյան, Ա.Վ.Քալանթարյան, Հ.Ս.Գաբրիելյան, Թ.Ա.Բարսեղյան, Ն.Յու.Կոստանյան, Է.Ա.Գրիգորյան, Ֆ.Ֆ.Բահարյան, Ա.Ժ.Առաքելյան, Ա.Ս.Սարգսյանի, Հ.Ա.Խալաթյան, Շ.Ռ.Իսայան, Ա.Մանուկյան) **«Ձեռնարկության տնտեսագիտություն» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը նվիրված է ձեռնարկության տնտեսագիտական բովանդակությանը, դրա էությանը, կազմին և կառուցվածքին, տեսակներին, ձեռնարկության ներքին և արտաքին հարաբերություններին, դրա տարբեր ստորաբաժանումների գործառույթներին և այլն: Ձեռնարկում բացահայտվում են ձեռնարկությունների ստեղծման անհրաժեշտությունը, դրանց դերն ու տեղը ձեռնարկատիրության կազմակերպման և հանրային կյանքի սոցիալ-տնտեսական հարցերն ընդգրկող ոլորտներում: Ներկայացված են ձեռնարկությունների ընդհանուր և արտադրական կառուցվածքը, տեսակները և կազմակերպաիրավական ձևերը, հիմնական և շրջանառու ֆոնդերը, արտադրական ծախքերը, տնտեսական արդյունավետությունը, շահույթը և շահութաբերությունը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի առանձնահատկությունները, այդ թվում՝ մի շարք ներդրումանպաստ ոլորտներում: Տրված են այդ ոլորտների իրավական կարգավորումները, դրանց դրական կամ թերի կողմերը: Ձեռնարկում համակարգված անդրադարձ է կատարվում նաև մրցակցային հարաբերությունների ժամանակակից հիմնախնդիրներին: Ձեռնարկը ներառում է միկրոէկոնոմիկայի ամբիոնի առարկայական ծրագրերում ներառված գրեթե բոլոր հարցերը, նաև՝ ժամանակի պահանջը: Այն համապատասխանում է ուսումնական գրականության կառուցվածքի ձևավորմանը ներկայացվող պահանջներին և էապես կնպաստի ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Ուսումնական

ձեռնարկը նախատեսված է «Կառավարում», «Մարքեթինգ», «Տնտեսագիտություն» մասնագիտությունների բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների համար: Այն շարադրված է պարզ և մատչելի տնտեսագիտական լեզվով և ոճով. կարող է դառնալ ուսանողների, դասախոսների և պրակտիկ աշխատողների սեղանի գիրքը:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության: 2 գրախոս փորձագետների եզրակացությունները վերադարձվել են հեղինակներին թերությունները շտկելու կամ պարզաբանումներ ներկայացնելու համար: Հեղինակների դիտարկումները ներկայացվելուց հետո ուսումնական ձեռնարկն ուղարկվել է կրկնակի գրախոսության և փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական եզրակացությունները, միկրոէկոնոմիկայի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ **միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Սերգեյի Մելքումյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ** (հեղինակային կոլեկտիվ՝ Ս.Հ.Պարսյան, Ա.Ս.Սիմոնյան, Զ.Ա.Թումասյանի, Էլ.Ն.Մաթևոսյան, Զ.Ս.Մելքումյան, Տ.Բ.Իգիթյան, Ա.Վ.Քալանթարյան, Հ.Ս.Գաբրիելյան, Թ.Ա.Բարսեղյան, Ն.Յու.Կոստանյան, Է.Ա.Գրիգորյան, Ֆ.Ֆ.Բահարյան, Ա.Ժ.Առաքելյան, Ա.Ս.Սարգսյանի, Հ.Ա.Խալաթյան, Շ.Ռ.Իսայան, Ա.Մանուկյան) **«Ձեռնարկության տնտեսագիտություն» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 150 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. մարտի 5
Երևան